

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ ՍԵՅՐԱՆԻ

**ՔԱՂԱՔԱՑԻԱՎԱՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ
ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

**ԻԳ.00.01- «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ
քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քաղ. գիտ. դոկտոր Խ. Ս. Գալստյան

քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Վ. Աթանեսյան

փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Ե. Մկրտիչյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ Պետական կառավարման ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2018 թ. հունիսի 8-ին, ժամը 15:00-ին, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՎ-ի «Քաղաքագիտություն» 056 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Ուլնեցու փող. 56/6:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. մայիսի 8-ին:

056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
հոգեբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ



Ք. Դ. Ասատրյան

Հետազոտության արդիականությունը: Գիտելիքի հասարակության ժամանակակից դարաշրջանում առանցքային նշանակություն ունեն ժողովրդափոխանության քաղաքացիավարական ինստիտուտների և գործընթացների քաղաքագիտական ուսումնասիրությունները: Ժողովրդափոխանության քաղաքացիավարական ինստիտուտների արդյունավետ գործառույթն անհրաժեշտ նախապայման է անվտանգության, մասնակցության, ներկայացվածության, վերահսկողության, հաշվետվողականության, թափանցիկության, երկխոսության, գործընկերության և զարգացման համար, քանզի քաղաքացիավարական ժողովրդափոխանությունը նպաստում է ներպետական, տարածաշրջանային և համաշխարհային քաղաքական կայունությանը, պետությունների միջազգային հեղինակության և վարկանիշի բարելավմանը, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավվածությանն ու ազդեցության ավելացմանը: Մարդկային քաղաքակրթության զարգացման արդի փուլում մշտապես կատարելագործվում են ժողովրդավարական քաղաքական համակարգի և վարչակարգի գործառույթն ընթացակարգերը՝ կառուցակցվում են քաղաքացիակենտրոն կառավարման մոդելները: Հետխորհրդային երկրներում քաղաքացիավարական ժողովրդափոխանության կայացման հիմնախնդիրներն առանցքային տեղ են զբաղեցնում Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ), Եվրոպայի խորհրդի (ԵԽ), Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) և Եվրոպական միության (ԵՄ) համակարգերում: Այդ կազմակերպությունների կողմից էլ աշխարհի տարբեր երկրների համար մշակված են միջազգային, տարածաշրջանային և ներպետական պարտավորությունների կատարման այնպիսի կառուցակարգեր, որոնք կնպաստեն քաղաքացիավարական ժողովրդափոխանության աստիճանական կայացմանը:

XXI դարի համաշխարհային մարտահրավերները քաղաքակրթական սպառնալիք են դառնում քաղաքացիավարական ժողովրդափոխանությունների առաջընթացի համար՝ վտանգելով դրա քաղաքական, սոցիալական, տնտեսական և հոգևոր-մշակութային հիմքերը: Նոր մարտահրավերներն ու սպառնալիքները պահանջում են համարժեք քաղաքացիավարական լուծումներ, որոնք կհանգեցնեն մարդակենտրոն գործոնների հզորացմանը և մարդկային ներուժի զարգացմանը:

Քաղաքացիավարական ժողովրդափոխանության համակարգի կառուցվածքային-գործառական հիմնախնդիրների համեմատական վերլուծության համատեքստում կարելի է գնահատել Հայաստանում և հետխորհրդային մյուս երկրներում քաղաքացիավարական ժողովրդափոխանության կայացման նախադրյալների վրա ազդող հիմնական գործոնները, կանխատեսել դրանց կառուցակցմանը նպաստող և արգելափակող մի-

տումները: Այս համատեքստում խիստ կարևորվում է կայացած և կայացող քաղաքացիավարական, ոչ քաղաքացիավարական և հակաքաղաքացիավարական երկրների միջև փոխհարաբերությունների ժամանակակից միտումների որոշարկումը, որի հիման վրա կարելի է դիտարկել նաև դրանցից յուրաքանչյուրի հետ հետխորհրդային երկրների ունեցած հարաբերակցության ձևաչափերը:

Հետխորհրդային երկրներում քաղաքացիավարական ժողովրդափշխանության կայացման նպատակն է ապահովել ժողովրդավարական բարեփոխումների գործընթացը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և քաղաքական համակարգի մյուս ինստիտուտների կայուն գործառույցը և զարգացումը: Այդ նոր տիպի իշխանության կայացման նախադրյալները դրսևորվում են մարդու քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ու ազատությունների պաշտպանության ներպետական և միջազգային ընթացակարգերի ներդաշնակեցման գործընթացում:

Յուրաքանչյուր կայացած քաղաքացիավարական երկրի հիմքը ժողովրդափշխանական համակարգը և ժողովրդավարական վարչակարգն է, որոնք ազգային շահերի համարժեք արդիականացման միջոցով նպաստում են պետության (քաղաքացիական պետության) և հասարակության քաղաքացիական ինստիտուցիոնալացմանը: Վերջինս էլ իր հերթին ենթադրում է պետության, քաղաքացիական հասարակության և անհատի միջև քաղաքացիավարական երկխոսության և գործընկերության ձևավորում, որը կարող է նպաստել տվյալ երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացմանը:

Հետխորհրդային երկրների ազգային անվտանգության համակարգի հետագա ինստիտուցիոնալացման գործընթացում առանցքային են քաղաքացիավարական ժողովրդափշխանությունը, քաղաքացիական համակեցության և համազգային համաձայնության ընթացակարգերը, ինչպես նաև քաղաքականության մշակման գործընթացում քաղաքացիական մասնակցության ընդլայնումն ու խորացումը: Հետխորհրդային, սևծովյան և հարավկովկասյան տարածաշրջանների անկայունության պայմաններում, այդ երկրների ինտեգրման գործընթացները տեղի են ունենում բազմաթիվ բախումնաձիւն հիմնախնդիրների ազդեցությամբ: Ներկայիս «ոչ պատերազմ - ոչ խաղաղություն» իրավիճակը հետխորհրդային պետություններից պահանջում է ինտեգրման, վերինտեգրման կամ ապահինտեգրման նոր ռազմավարությունների մշակում և իրականացում:

ՀՀ-ում և հետխորհրդային մյուս երկրներում քաղաքացիավարական ժողովրդափշխանության կայացման նախադրյալների (գիտականորեն

մշակված ուղիների) քաղաքագիտական վերլուծության անհրաժեշտությունն ինքնըստինքյան պայմանավորում է հետազոտության թեմայի արդիականությունն ու հրատապությունը:

Ատենախոսության հետազոտության **օբյեկտն է** քաղաքացիավարական ժողովրդախիշխանության արդյունավետ գործառնման տարրերի և կայացման նախադրյալների քաղաքագիտական վերլուծությունը, իսկ **առարկան՝** հետխորհրդային երկրներում քաղաքացիավարական ժողովրդախիշխանության կայացման նախադրյալները, քաղաքական համակարգերի և վարչակարգերի քաղաքացիավարական փոխակերպումները, դրանց նպաստող և խոչընդոտող գործոնների բացահայտումը, ինչպես նաև ՀՀ-ում ժողովրդավարության կայացման հիմնական ձեռքբերումների ամփոփումն ու զարգացման միտումների ուրվագծումը:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության **նպատակն է** քաղաքագիտական վերլուծության ենթարկել «քաղաքացիավարական ժողովրդախիշխանություն» հասկացությունը, հստակեցնել քաղաքացիավարության տեսության կատեգորիալ ապարատը, ժողովրդախիշխանության համակարգի կառուցվածքային-գործառնական բաղկացուցիչ տարրերի տեսանկյունից հիմքերը, արդի դարաշրջանում քաղաքացիավարական ժողովրդախիշխանության կայացման նախադրյալները հետխորհրդային հինգ երկրներում (Ռուսաստանի Դաշնություն, Բելառուսի Հանրապետություն, Ուկրաինա, Ղազախստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետություն): Այդ հիմնահարցերի ուսումնասիրության հիման վրա հնարավոր է դառնում տալ ՀՀ-ում քաղաքացիավարական ժողովրդախիշխանության կայացման քաղաքագիտական վերլուծությունը և դիտարկել քաղաքացիավարական գործոնների տեղն ու դերը երկրի քաղաքական համակարգում, ինչպես նաև քաղաքացիավարական ժողովրդախիշխանության կայացման ներպետական և միջազգային ընթացակարգերը:

Աշխատանքում առաջադրվում են հետևյալ **հետազոտական խնդիրները.**

- Բացահայտել քաղաքացիավարական ժողովրդախիշխանության հիմնախնդրի ուսումնասիրման տեսական հիմքերը հասարակական-քաղաքական մտքի և հայեցակարգերի շրջանակներում:

- Վերհանել քաղաքացիավարական ժողովրդախիշխանությանն առնչվող ցվիլիլոգիական հիմնահարցերը՝ գործառության մեջ դնելով նոր հասկացություններ և սահմանումներ:

- Դեմոկրատիայի ինդեքսների առաջադեմ փորձի ուսումնասիրությամբ գնահատել քաղաքացիավարական ժողովրդախիշխանության կայացմանը նպաստող գործոնները՝ մշակելով ցվիլիարխիայի նոր ինդեքս:

- Վերլուծել Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության, Ուկրաինայի, Ղազախստանի և Հայաստանի Հանրապետությունների ժողովրդավարության մակարդակի ինդեքսի բաղադրիչները՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական և առողջապահական:

- Համեմատական քաղաքագիտական ուսումնասիրությունների հիման վրա դիտարկել քաղաքացիավարության ժողովրդաիշխանության տեղն ու դերը ՀՀ քաղաքական համակարգում:

- Հետազոտել ՀՀ-ում քաղաքացիավարական ժողովրդաիշխանության կայացման մակարդակը՝ ուրվագծելով քաղաքացիավարական ընթացակարգերի արդյունավետ և համարժեք գործառնման հնարավոր միտումները:

Հետազոտության մեթոդաբանությունը: Ատենախոսության մեթոդաբանական հիմք են ծառայել գիտական հետազոտության և հատկապես քաղաքական գիտությունների ընդհանուր և առանձնահատուկ մեթոդաբանական սկզբունքներն ու եղանակները: Գիտական հետազոտության տրամաբանական-մեթոդաբանական ընդհանուր մոտեցումներից կիրառվել են պատմական, համեմատական, համակարգային, ինդեքսների կառուցման և վիճակագրական ուսումնասիրության մեթոդները: Պատմական մեթոդը թույլ է տվել բացահայտել ժողովրդավարության զարգացման օրինակափոխությունները քաղաքական մտքի պատմության համատեքստում: Համեմատական մեթոդը նպաստել է հանրային կառավարման տարբեր ձևեր և քաղաքացիավարական զարգացման տարբեր մակարդակներ ունեցող հետխորհրդային երկրների քաղաքական համակարգերի կառուցվածքային-գործառնական առանձնահատկությունների ու ընդհանրությունների բացահայտմանը:

Համակարգային մեթոդը հնարավորություն է ընձեռել հետխորհրդային երկրներում քաղաքացիավարական ժողովրդաիշխանության կայացման նախադրյալները դիտարկելու համալիր ամբողջության մեջ, ուսումնասիրելու դրանց քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական և առողջապահական գործոնների փոխապայմանավորվածությունն ու փոխազդեցությունը: Ինդեքսների կառուցման մեթոդի կիրառումը հնարավորություն է ընձեռել ժողովրդավարության ինդեքսագետների մոտեցումների ընդհանրացման հիման վրա մշակելու ցիվիլիարխիայի նոր ինդեքս՝ իր բաղկացուցիչ տարրերով: Ինչ վերաբերում է վիճակագրական մեթոդին, ապա դրա կիրառմամբ առանձնացվել և վերլուծվել են հետխորհրդային երկրների ժողովրդավարության մակարդակի տարբեր ինդեքսների ձևավորման պատճառները և ներկայացվել քաղաքացիավարության կայացմանը նպաստող հիմնական գործոնները:

Հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը: Դոկտորական ատենախոսության թեմայի շրջանակներում ներառված հիմնախնդիրներից շատերը տարբեր առումներով դիտարկվել և դիտարկվում են դեմոկրատիայի տեսաբանների կողմից: Ժողովրդավարության և ժողովրդաիշխանության կայացման հիմնախնդիրները պատմական բոլոր ժամանակաշրջաններում եղել են քաղաքական մտքի ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում: Այդ կարգի առանձին գաղափարներն արդեն իսկ ամրագրված էին Պլատոնի, Արիստոտելի և Յիցերոնի աշխատություններում¹, իսկ ավելի ընդգրկուն դրանք սկսեցին քննարկվել Նոր դարաշրջանի արևմտաեվրոպական փիլիսոփաների ու քաղաքագետների² (Թ. Հոբս, Ջ. Լոկ, Բ. Սպինոզա, Շ. Լ. Մոնտեսքիո, Ժ.-ժ. Բոստ) կողմից, որոնք առաջին պլան մղեցին իշխանությունների տարանջատման, օրենքի գերակայության, քաղաքացիական հասարակության, մարդու իրավունքների և ազատությունների, քաղաքացիական կրոնի, արդարության, հավասարության, ներկայացուցչականության և համանման այլ խնդիրներ:

Ավելի ուշ հայեցակարգային խնդիրներին նվիրված ուսումնասիրություններ իրականացվեցին հատկապես ժողովրդավարական կառավարման տեսության ներկայացուցիչներ Ա. դե Թոքվիլի, Ջ. Ս. Միլի, Մ. Վեբերի, Բ. Չիչերինի, Պ. Նովգորոդցևի, Ս. Կոտլյարսկու, Ս. Ֆրանկի, Յ. Շումպետերի, Պ. Սորոկինի, Կ. Շմիտի, Ռ. Արոնի կողմից³:

¹ Այդ մասին տե՛ս *Պլատոն*. Сочинения в трех томах (4 книгах). Т. 3. Ч. 2. М., 1972, 678 с., *Аристотель*. Политика // Сочинения: В 4 т. Т. 4. М., 1983, с. 376-644, *Цицерон*. Диалоги. О государстве. О законах. М., 1966, 224 с.:

² Այդ մասին տե՛ս *Գոբբս Թ.* Левиафан, или Материя, форма и власть государства церковного и гражданского // Сочинения: В 2 т. - Т. 2. М., 1991, с. 3-545, *Локк Дж.*, Два трактата о правлении // Сочинения: В 3 т. - Т. 3. М., 1988, 668 с., *Спиноза Б.*, Богословско-политический трактат. Мн., 1998, 528 с., *Монтескье Ш. Л.*, О духе законов // Избранные произведения. М., 1955, 803 с., *Руссо Ж.-Ж.*, Об общественном договоре, или принципы политического права. Трактаты. М., 1969, 123 с.:

³ Այդ մասին տե՛ս *Tocqueville A. de*, Über die Demokratie in Amerika, Erster Teil. S., 1959, 507 S., *Tocqueville A. de*, Über die Demokratie in Amerika. Zweiter Band. S., 1962, 368 S., *Милль Дж. Ст.*, О свободе // Утилитарианизм. О свободе. СПб., 1900, 427 с., *Weber M.*, Politik als Beruf. В., 1993, 66 S., *Weber M.*, Staatssoziologie. В., 1966, 140 S., *Чичерин Б. Н.*, Собственность и государство. В 2 ч. Ч. 1-2. М., 1883, 460 с., *Новгородцев П. И.*, Сочинения. М., 1995, 446 с., *Котляревский С. А.*, Предпосылки демократии, в кн.: «Опыт русского либерализма. Антология». М., 1997, с. 215-239, *Франк С. Л.*, Философские предпосылки деспотизма, в кн.: «Опыт русского либерализма. Антология». М., 1997, с. 240-265, *Schumpeter J.*, Kapitalismus, Sozialismus und Demokratie. В., 1950, 498 S., *Schmitt C.*, Die

Ինքնին հասկանալի է, որ ժողովրդավարության ծավալման ու զարգացման հետ մեկտեղ ի հայտ եկան նոր խնդիրներ, որոնց վերաբերյալ համեմատական քաղաքագիտական ուսումնասիրություններ են իրականացրել ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական մի շարք քաղաքագետներ ու հասարակագետներ: Դրանցից յուրաքանչյուրին մեկ առ մեկ չանդրադառնալու համար, կարծում եմ, հրապարակի վրա եղած քաղաքագիտական վերլուծությունները կարելի է դասակարգել մի քանի խմբերի:

Առաջին խումբ ուսումնասիրությունները վերաբերում են արդի պայմաններում ժողովրդավարության կայացման տեսական հիմնահարցերի վերլուծությանը: Այս խմբի մեջ կարելի է դասել՝ Յու. Հաբերմասի, Ռ. Դալի, Ջ. Լ. Կոենի, Է. Արատոյի, Վ. Մերկելի, Ա. Կրուսասնի, Ի. Շապիրոյի, Ջ. Սարտորիի, Ս. Մ. Լիպսետի, Ա. Պշևոսկու, Ա. Լեյախարտի, Ռ. Դարենդորֆի, Ն. Բոբիոյի, Ֆ. Շմիտերի, Ս. Հանտինգտոնի, Դ. Ռոստոուի, Ջ. Օ'Դոնելի, Չ. Թիլլիի, Խ. Ջ. Լինցի, Ա. Ստեփանի, Ֆ. Ջաքարիայի, Պ. Ալիայտի, Դ. Սուտորի, Շ. Էյզենշդատի, Մ. Մարգարյանի, Ա. Մարգարովի, Ար. Ալեքսանյանի աշխատությունները⁴, որոնցում դիտարկվում են ժողովր-

geistesgeschichtliche Lage des heutigen Parlamentarismus. B., 1991, 89 S., **Aron R.**, Demokratie und Totalitarismus. H., 1970, 267 S.:

⁴ Այդ մասին տե՛ս **Մարգարյան Մ. Մ.**, Քաղաքական ընտրանին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Եր., 2006, 392 էջ, **Մարգարյան Մ. Մ.**, Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր: Եր., 2004, 261 էջ, **Մարկարով Ա. Ա.**, Полупрезидентализм в контексте постсоветской трансформации // ПОЛИТЭКС № 2, 2006, с. 279-288; **Markarov A. A.**, MacroInstitutional Political Structures and Their Development in Armenia // Demokratizatsiya The Journal of Post-Soviet Democratization № 14 (2), 2006, pp. 159-170, **Մարկարով Ա. Ա.**, Проблемы консолидации демократии в Армении (на основе анализа ценностных ориентаций и отношений населения Армении) // Политическая наука и политические процессы в Российской Федерации и Новых Независимых Государствах / Отв. ред. **К. В. Куселев.** Екатеринбург, 2005, с. 56-66, **Ալեքսանյան Ար. Ս.**, Ժողովրդավարության մակարդակի չափման մոդելը // Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական վերլուծություն. Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ուկրաինա, Մոլդովա: Եր., 2015, էջ 13-28, **Dahl R.**, Vorstufen zur Demokratie-Theorie. T., 1976, 149 S.; **Даль Р.**, Демократия и ее критики. М., 2003, 576 с., **Даль Р.**, О демократии. М., 2000, 204 с., **Dahrendorf R.**, Auf der Suche nach einer neuen Ordnung. M., 2003, 156 S., **Dahrendorf R.**, Der moderne soziale Konflikt: Essay zur Politik der Freiheit. S., 1992, 326 S., **Dahrendorf R.**, Die Krisen der Demokratie: ein Gespräch mit A. Polito. M., 2002, 115 S., **Dahrendorf R.**, Für eine Erneuerung der Demokratie in der Bundesrepublik. M., 1968, 167 S., **Dahrendorf R.**, Gesellschaft und

դավարության կայացման հայեցակարգային մոտեցումները: Հիմք ընդունելով դրանցում կատարված կարևորագույն հարցադրումները և ստացված արդյունքները, ատենախոսության մեջ վերլուծվում են քաղաքացիավարական ժողովրդափոխանության կայացման տեսական հիմքերը: Ըստ այդմ, հատկապես ուշադրություն է դարձվում միջազգային հեղինակավոր

Freiheit: Zur soziologischen Analyse der Gegenwart. M., 1961, 455 S., **Dahrendorf R.**, The Challenge for Democracy // Journal of Democracy, Vol. 14, № 4, October 2003, pp. 101-114, **Habermas J.**, Faktizität und Geltung: Beiträge zur Diskurstheorie des Rechts und des demokratischen Rechtsstaats. Frankfurt a.M., 1992, 667 S., **Held D.**, Democracy and the New International Order, in: **D. Archibugi, D. Held** (ed.). Cosmopolitan Democracy: An Agenda for New World Order. Polity Press, 1995, pp. 96-120, **Lijphart A.**, Democracies: Patterns of Majoritarian and Consensus Government in Twenty-One Countries. Yale University Press, 1984, 232 p., **Lijphart A.**, Democracy in Plural Societies: A Comparative Exploration. Yale University Press, 1977, 248 p., **Lipset S. M.**, Soziologie der Demokratie. Neuwied a. Rh.; Berlin-Spandau, 1962, 388 S., **Przeworski A.**, Capitalism and social democracy. Cambridge Uni. Press, 1985, 277 p., **Przeworski A.**, Democracy and the markt. Cambridge Uni. Press, 1991, 228 p., **Sartori G.**, Demokratietheorie. D., 1997, 616 S., **Хантингтон С.**, Столкновение цивилизации. М., 2003, 603 с., **Хантингтон С.**, Третья волна. Демократизация в конце XX века. М., 2003, 368 с., **Diamond L.**, Is the Third Wave over? // Journal of Democracy, Vol. 7, № 3 July 1996, pp. 22-35, **O'Donnell G.**, Delegative Democracy // Journal of Democracy, 1994, Vol. 5, № 1, pp. 55-69, **Schmitter P. C.**, Dangers and Dilemmas of Democracy // Journal of Democracy, Vol. 5, № 2, 1994, pp. 57-74, **Zakaria F.**, The Rise of Illiberal Democracy // Foreign Affairs 76, 1997, № 6, pp. 22-43, **Ростоу Д. А.**, Переходы к демократии: попытка динамической модели // Полис, 1996, № 5, с. 5-15, **Козн Дж. Л., Арато Э.**, Гражданское общество и политическая теория. М., 2003, 784 с., **Шапиро И.**, Демократия и гражданское общество // Полис, 1992, № 4, с. 17-29, **Шапиро И.**, Переосмысливая теорию демократии в свете современной политики // Полис, 2001, № 3, с. 6-15, **Шапиро И.**, Пересмысливая теорию демократии в свете современной политики // Полис, 2001, № 5, с. 58-62, **Шмиттер Ф.**, Размышления о гражданском обществе и консолидации демократии // Полис, 1996, № 5, с. 16-27, **Меркель В., Круассан А.**, Формальные и неформальные институты в дефектных демократиях (I) // Полис, 2002. № 1, с. 6-17, **Меркель В., Круассан А.**, Формальные и неформальные институты в дефектных демократиях (II) // Полис, 2002, № 2, с. 20-30, **Тьерс П.**, Коррозия демократии, или насколько устойчива демократия с изъянами? // Свободная мысль, 2010, № 7 (1614), с. 75-100, **Alheit P.**, Zivile Kultur: Verlust und Wiederaneignung der Moderne. Frankfurt a.M., 1994, 335 S., **Стур Д. Д.**, Открывая демократию заново (I) // Полис, 2003. № 5, с. 12-24, **Стур Д. Д.**, Открывая демократию заново (II) // Полис, 2003. № 6, с. 39-49, **Эйзенштадт Ш. Н.**, Парадокс демократических режимов: хрупкость и изменяемость (I, II) // Полис, 2002, № 2, 3:

կազմակերպությունների ժողովրդավարության ինդեքսավորման գործիքակազմին: Հենց այդ տեսակետից էլ կարևորվել են Հայաստանի Հանրապետության և հետխորհրդային մի շարք երկրների ժողովրդավարության մակարդակի ինդեքսների և վարկանիշավորման համեմատական վերլուծությունները՝ առաջադրելով ցիվիլիարխիայի նոր ինդեքս իր բաղկացուցիչ տարրերով:

Երկրորդ խումբ ուսումնասիրությունները վերաբերում են Ռուսաստանի Դաշնությունում, Բելառուսի Հանրապետությունում, Ուկրաինայում, Ղազախստանի և Հայաստանի Հանրապետություններում ժողովրդաիշխանության կայացման քաղաքացիավարական հիմնախնդիրներին: Այդ տեսակետից կարևորվում են ի մասնավորի Ա. Մարգարովի, Ար. Ալեքսանյանի, Ռ. Սակվայի, Վ. Գելմանի, Գ. Ռոբերտսոնի, Թ. Ռեմինգտոնի, Դ. Ռոտմանի, Բ. Բենետի, Մ. Մենդրասի, Վ. Ռովյոյի, Ա. Վիլսոնի, Դ. Մարպետի, Դ. Ռոտմանի, Ա. Դանիլովի, Մ. Աբերգի, Մ. Սանդբերգի, Ա. Բիրչի, Ա. Պշիգովայի, Ի. Գոբոզովայի, Յու. Կրասինի, Տ. Լեբեդևայի, Ի. Պանտինի, Ե. Բեստյուժևի, Ա. Մելիլի, Մ. Գրաչովի, Ն. Բարանովի աշխատությունները⁵, ինչպես նաև միջազգային կազմակեր-

⁵ Այդ մասին տե՛ս **Маркаров А. А.**, Становление, развитие и особенности функционирования полупрезидентализма в России и Польше. Ер., 2009, 260 с., **Маркаров А. А.**, Полупрезидентализм в контексте постсоветской трансформации. Ер., 2008, 218 с., **Ալեքսանյան Ար. Ս.**, Հայաստանի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը // Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական վերլուծություն (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ուկրաինա, Մոլդովա): Եր., 2015, էջ 29-53, **Ալեքսանյան Ար. Ս.**, Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի միջերկրային վերլուծությունը (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ուկրաինա, Մոլդովա) // Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական վերլուծություն (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ուկրաինա, Մոլդովա): Եր., 2015, էջ 255-268, **Հարությունյան Է. Ա.**, Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ: Եր., 2000, 268 էջ, **Թորոսյան Տ. Ս.**, Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա: Եր., 2006, 423 էջ, **Պողոսյան Գ. Ա.**, Հայ հասարակությունը XXI դարասկզբին: Եր., 2006, 376 էջ, **Sakwa R.**, The Crisis of Russian Democracy: The Dual State, Factionalism and the Medvedev Succession. Cambridge University Press, 2011, 418 p., **Sakwa R.**, “Political Leadership.” In Return to Putin’s Russia: Past Imperfect, Future Uncertain (ed. by **Stephen K. Wegren**). Rowman & Littlefield Publishers, 2012, pp. 25-44, **Саква Р.**, Режимная система и гражданское общество в России // Полис, 1997, № 1, с. 61-82, **Саква Р.**, Путин. Выбор России. М., 2006, 480 с., **Gel’man V.**, Subnational Authoritarianism in Russia: Trajectories of Political Evolution, in: Presidents, Oligarchs

պոլիտոնոմիայի ինդեքսները, որոնց համեմատական վերլուծությամբ դիտարկվում են ռուսական, բելառուսական և ուկրաինական հասարակություններում ժողովրդավարության մակարդակի փոխակերպումները:

and Bureaucrats: Forms of Rule in the Post-Soviet Space (ed. by **S. Stewart** et al.). Ashgate Pub. Co., 2012, pp. 89-106, **Robertson G. B.**, The Politics of Protest in Hybrid Regimes: Managing Dissent in Post-Communist Russia. Cambridge University Press, 2010, 304 p., **Remington T. F.**, Parliament and the Dominant Party Regime, in: After Putin's Russia: Past Imperfect, Future Uncertain (ed. by **S. K. Wegren, D. R. Herspring**). Rowman & Littlefield Publishers, 2009, pp. 39-58, **Remington T. F.**, Politics in Russia. Pearson, 2011, 288 p., **Bennett B.**, Last Dictatorship in Europe: Belarus under Lukashenko. Oxford University Press, 2011, 372 p., **Wilson A.**, Belarus: The Last European Dictatorship. Yale University Press, 2012, 256 p., **Wilson A.**, Ukraine Crisis: What It Means for the West. Yale University Press, 2014, 248 p., **Marples D.**, Belarus: A Denationalized Nation. Routledge, 1999, 130 p., **Rotman D. G., Danilov A. N.**, President and opposition: specific features of the Belarusian political scene, in: Contemporary Belarus: Between Democracy and Dictatorship (ed. by **E. A. Korosteleva, C. W. Lawson, R. J. Marsh**). Routledge, 2002, pp. 100-111, **Mendras M.**, Russian Politics: The Paradox of a Weak State. Oxford University Press, 2012, 288 p., **Ровдо В.**, Сравнительная политология: учеб. пособие. В 3 ч. Ч. 3. Вильнюс: ЕГУ, 2009, 352 с., **Aberg M., Sandberg M.**, Social Capital and Democratisation: Roots of Trust in Post-Communist Poland and Ukraine. Ashgate Pub Ltd., 2003, 348 p., **Birch S.**, Elections and Democratization in Ukraine. Palgrave Macmillan, 2000, 212 p., **Пшизова С. Н.**, Можно ли управлять демократией? Часть I // Полис, 2013, № 6, с. 171-183, **Пшизова С. Н.**, Можно ли управлять демократией? // Полис, 2014, № 1, с. 28-44, **Пшизова С. Н.**, Демократия и политический рынок в сравнительной перспективе (I) // Полис, 2000, № 2, с. 30-44, **Пшизова С. Н.**, Демократия и политический рынок в сравнительной перспективе (II) // Полис, 2000, № 3, с. 6-17, **Гобозов И. А.**, Охлос и демократия // Философия и общество, 2006, № 4, с. 5-19, **Красин Ю. А.**, Российская демократия: коридор возможностей // Полис, 2004, № 6, с. 125-135, **Лебедева Т. П.**, Либеральная демократия как ориентир для посттоталитарных преобразований // Полис, 2004, № 2, с. 76-84, **Пантин И. К.**, Демократия в России: противоречия и проблемы // Полис, 2003, № 1, с. 134-148, **Бестужев Е. Л.**, Христианская демократия: становление и перспективы развития в Западной Европе и в России // Политическая наука, 2003, № 4, с. 148-159, **Мельвиль А. Ю.**, «Политический атлас современности»: замысел и общие теоретико-методологические контуры проекта // Полис, 2006, № 5, с. 6-14, **Мельвиль А. Ю., Ильин М. В., Мелешкина Е. Ю., Миронюк М. Г., Полунин Ю. А., Тимофеев И. Н.**, Опыт классификации стран // Полис, 2006, № 5, с. 15-38, **Мельвиль А. Ю.**, Демократические транзиты (теоретико-методологические и прикладные аспекты). М., 1999, 106 с., **Грачев М. Н., Мадатов А. С.**, Демократия: методология исследования, анализ перспектив. М., 2004, 128 с., **Баранов Н. А.**, Современная демократия: эволюционный подход. СПб., 2007, 208 с.:

Երրորդ խմբի մեջ կարելի է դասել Հ. Քոթանջյանի, Ա. Մանայանի, Գ. Քեոյանի, Ա. Ենգոյանի, Մ. Մարգարյանի, Ա. Մարգարովի, Ա. Աթանեսյանի, Ար. Ալեքսանյանի, Է. Հարությունյանի, Գ. Պողոսյանի, Տ. Թորոսյանի աշխատություններում⁶ արծարծված գաղափարներ և միջազգային կազմակերպությունների կողմից օգտագործված ինդեքսներ, որոնց համեմատական վերլուծության հիման վրա ՀՀ-ում քաղաքացիավարական ժողովրդախիշխանության գործոնների համատեքստում դիտարկվում են մարդու քաղաքական իրավունքների և ազատությունների պաշտպանության ընթացակարգերը, ինչպես նաև խորհրդարանական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, արհեստակցական միությունների և քաղաքացիական ժողովուրդակալի հիմնախնդիրները: Ըստ այդմ հատուկ ուշադրություն է դարձվում ՀՀ-ում քաղաքացիավարական ժողովրդախիշխանության կայացման նախադրյալների վրա՝ այդ համատեքստում վերլուծելով նաև դրանց օրենսդրական հենքը և միջազգային իրավական փաստաթղթերը:

Վերը նշված աշխատություններում և աղբյուրներում, անշուշտ, դիտարկված են սույն դոկտորականատենախոսության թեմայի տարբեր տե-

⁶ Այդ մասին տե՛ս **Котанджян Г. С.**, Этнополитология консенсуса-конфликта: цивилизованные проблемы теории и практики. М., 1992, 181 с., **Котанджян Г. С.**, Грани согласия-конфликта. Цивилизационные проблемы теоретической и прикладной политологии. М., 1992, 183 с., **Քոթանջյան Հ. Ա.**, Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները: Եր., 2010, 764 էջ, **Манасян А. С.**, Карабахский конфликт: Ключевые понятия и хроник. Ер., 2005, 216 с., **Քեոյան Գ. Ա.**, Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը: Եր., 2002, 290 էջ, **Քեոյան Գ. Ա.**, Բազմակուսակցության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում 1990-2000 թթ. (պատմա-քաղաքագիտական ակնարկ) // Բանբեր Երևանի համալսարան, № 2 (104), 2001, էջ 52-62, **Енгоян А. П.**, Общность ценностных ориентаций и ментальности постсоветских обществ // Внешняя политика Республики Армения. Проблемы и вызовы: Научно-практическая конференция, посвященная 22-летию независимости РА (Гл. ред. **Г. Петросян**). Ер., 2014, с. 55-63, **Енгоян А. П.**, Идеологические основы социально-политических трансформаций в постсоветской Армении. Ер., 2011, 357 с., **Մարգարյան Մ. Մ.**, Քաղաքական ընտրանին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Եր., 2006, **Маркаров А. А.**, Полупрезидентализм в контексте постсоветской трансформации. Ер., 2008, 218 с., **Атанесян А. В.**, Актуальные проблемы современных политических и конфликтных коммуникаций. Ер., 2008, 302 с., **Ալեքսանյան Ար. Ա.**, Հայաստանի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը (1995-2012թթ.) // Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 2014, № 3, էջ 60-75:

սանկյուններին վերաբերող առանձին հիմնախնդիրներ, որոնք կարևոր նշանակություն ունեն և արդիական են: Այդուհանդե՛ս դրանցից և ոչ մեկում, բնականաբար, համակարգված և համալիր ձևով չեն ուսումնասիրվել քաղաքացիավարական ժողովրդաիշխանությունը, թեև արվել են արժեքավոր հարցադրումներ և առաջադրվել հետաքրքիր լուծումներ: Այդ ամենի համեմատական վերլուծության միջոցով էլ հենց հնարավոր դարձավ դիտարկել քաղաքացիավարական ժողովրդաիշխանության կայացման նախադրյալները և կատարել քաղաքագիտականորեն փաստարկված եզրակացություններ և առաջարկություններ:

Ատենախոսության գիտական նորույթը: Աշխատանքի շրջանակներում առանձնացված հետազոտական խնդիրների հաղթահարումը թույլ է տալիս առաջ քաշել տեսական ու գործնական նշանակություն ունեցող մի շարք գաղափարներ ու դրույթներ, որոնցից գիտական նորույթի իմաստով առավել կարևորներն են.

- Ժողովրդավարության համակարգի կառուցվածքային-գործառական հիմնախնդիրների համեմատական քաղաքագիտական վերլուծությունը հնարավորություն է տալիս փաստարկելու քաղաքացիավարական ժողովրդաիշխանության ընթացակարգերի կարևորությունը՝ ներմուծելով «ցիվիլիարխիկ դեմոկրատիա» հասկացությունը:

- Զարգացնելով դեմոկրատիայի ժամանակակից հայեցակարգային մոտեցումները՝ առաջադրվում է դեմոկրատիայի «եռանկյունի» մոդելը՝ որպես ժողովրդավարության և ժողովրդաիշխանության միասնության մարմնավորում:

- Ժողովրդավարության քաղաքական համակարգի և վարչակարգի քաղաքացիավարության բաղադրիչների ամբողջական դիտարկմամբ մասամբ հարստացվում է քաղաքացիավարության տեսության կատեգորիալ ապարատը՝ ներմուծելով մի շարք հասկացություններ: Վերջիններս լրացնում են ժամանակակից պայմաններում քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային փոխակերպումների հետևանքով առաջացած հասարակական նոր իրավիճակների և երևույթների բնորոշման հարցում քաղաքագիտության մեջ ցարդ նկատվող բացը:

- Ժողովրդավարության ինդեքսների համեմատական վերլուծության հիման վրա ատենախոսության մեջ գործադրվում է ցիվիլիարխիայի նոր ինդեքս՝ իր բաղկացուցիչ տարրերով, որոնք լրացնում են երկրների վարկանիշավորման մեթոդաբանությունն ու գործընթացը:

- Ատենախոսը գտնում է, որ հետխորհրդային ժողովրդաիշխանությունների կայացման նախադրյալները հանդես են գալիս որպես քաղաքացիավարական նոր գործոններ, որոնք ունեն դրսևորման որոշակի առանձնահատկություններ Ռուսաստանի, Բելառուսի, Ուկրաինայի, Ղա-

զախստանի և Հայաստանի քաղաքացիական հասարակությունների համակարգում: Ընդ որում, այդ երկրներից յուրաքանչյուրն ունի քաղաքական համակարգի և վարչակարգի, հանրային կառավարման և քաղաքացիական հասարակության առանցքային կազմակերպությունների միջև փոխհարաբերության ինքնատիպ մոդելներ:

- ՀՀ-ում քաղաքացիավարական ժողովրդաիշխանության կայացման քաղաքագիտական ուսումնասիրության հիման վրա ատենախոսը գտնում է, որ խորհրդարանական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, արհեստակցական միությունների, քաղաքացիական ժողովախորհրդի և կանանց քաղաքական ներկայացուցչության ընթացակարգերի հետևողական զարգացումը ոչ միայն նպատակահարմար է, այլև ներկա պայմաններում դարձել է պատմական անհրաժեշտություն: Վերջիններիս գործունեության վերլուծությունը բերում է այն համոզման, որ դրանց միջև և դրանց հետ համագործակցության խորացումը կարևոր պայման է քաղաքական կայունության ամրապնդման: Ըստ այդմ, ատենախոսն առաջարկում է ՀՀ կառավարությանն առընթեր ստեղծել արհեստակցական միավորումների հետ համագործակցության կոմիտե, որը կազակցի կառավարությանը արդյունավետ և համարժեք կարգավորելու սոցիալ-աշխատանքային հիմնախնդիրները, իսկ դա կնպաստի սոցիալական երկխոսության և գործընկերության կայացմանը:

- Տրվել է քաղաքացիական ժողովախորհրդի և քաղաքացիական կրթության նոր սահմանումներ՝ հստակեցնելով քաղաքացիավարական մշակույթին բնորոշ առանձնահատկությունները:

- Սոցիալական գործընկերության համակարգերի տիպաբանության համատեքստում առաջադրվել է դրանց դասակարգման քաղաքացիավարական նոր հենք՝ հիմնավորելով դրա կիրառման նպատակահարմարությունն ու արդյունավետությունը: Ըստ այդմ առանձնացվել է սոցիալական գործընկերության մշակույթը՝ որպես քաղաքացիավարական ժողովրդաիշխանության կարևոր գործոն:

- Հետխորհրդային տարածքում ընթացող քաղաքական գործընթացների բախումնաձին և քաղաքակրթաձին չափումների համատեքստում ներմուծվել է «միջինտեգրացիոն կոնֆլիկտների երկատվածություն» հասկացությունը:

Հետազոտության գիտական նորույթով պայմանավորված պաշտպանության են ներկայացվում հետևյալ **դրույթները**.

- Քաղաքական մտքի զարգացման և հասարակական քաղաքակրթական առաջընթացի առանձնահատկություններով պայմանավորված դեմոկրատիան՝ որպես գիտական հասկացության ու քաղաքացիավարական երևույթ, ունեցել է առանցքային նշանակություն: Յարդ հասարակության

քաղաքական համակարգերի կառուցվածքային-գործառական կայունության, պետական իշխանության լեգիտիմության, օրենքի գերակայության, քաղաքացիական հասարակության, մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ներպետական և միջազգային ընթացակարգերի կայացման պայմաններում զգալի են տարբեր դարաշրջանների ժողովրդավարության տեսությունների, հայեցակարգերի և համեմատական ուսումնասիրությունների հրատապությունը: Մասնավորապես, գիտելիքի հասարակության դարաշրջանում՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային և գիտակրթական գործընթացները մի կողմից նպաստում են հետխորհրդային երկրների ժողովրդավարացման գործընթացին, մյուս կողմից՝ պատճառ դառնում քաղաքացիավարական անկայունությունների, ոչ քաղաքացիավարական և հակաքաղաքացիավարական վարչակարգերի ձևավորմանը:

- Հետխորհրդային երկրների քաղաքական համակարգերում ընթացող ժողովրդավարացման գործընթացներն ազդում են դրանց քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային և այլ փոխակերպումների վրա՝ առաջացնելով հասարակական նոր իրավիճակներ և երևույթներ: Քաղաքացիավարական ժողովրդաիշխանության համատեքստում հետխորհրդային երկրների կայուն զարգացման և ինստիտուցիոնալ բարեփոխումների արդյունավետության բարձրացման տեսանկյունից արդիական են օրենքի գերակայության, կոռուպցիայի դեմ պայքարի, կանանց քաղաքական մասնակցության, քաղաքացիական լրագրության և կրթության, իրական աշխատավարձի բարձրացման, գործազրկության և աղքատության մակարդակի նվազեցման, կրթության և առողջապահության ոլորտներում պետական ծախսերի ավելացման և այլ գործոնները, ինչպես նաև դրանցից բխող ռազմավարական լուծումների իրավական ամրագրումն ու քաղաքացիավարական մշակույթի ձևավորումը:

- Ատենախոսը գտնում է, որ Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության, Ուկրաինայի, Ղազախստանի և Հայաստանի Հանրապետությունների ժողովրդավարության մակարդակների վրա ազդում են ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական, սոցիալական, կրթական և առողջապահական գործոններն ու դրանց բաղկացուցիչ տարրերը: Դրանց փոխապայմանավորվածությունը ազդում է խնդրո առարկա երկրների քաղաքական համակարգերի ժողովրդավարացման դրական, բացասական կամ չեզոք միտումների վրա՝ ձևավորելով քաղաքացիավարությանն անցման ինքնատիպ մոդելներ:

- Ռուսաստանի Դաշնությունում, Բելառուսի Հանրապետության, Ուկրաինայի, Ղազախստանի և Հայաստանի Հանրապետությունների սոցիալական գործընկերության համակարգերի հրապարակայնության և

հաշվետվողականության նպատակաուղղված բարեփոխումները դեռևս չեն հանգեցնում դրանց քաղաքացիավարական գործընկերության ընթացակարգերի կայացմանն ու զարգացմանը: Խնդրո առակա երկրներում ընդունված սոցիալական գործընկերության սահմանադրաիրավական և օրենսդրական ընթացակարգերը, ինչպես նաև վավերացված Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներն անհրաժեշտ իրավաքաղաքական հիմք են արհեստակցական միությունների հանրային մասնակցության մշակույթի ձևավորման համար:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Աշխատանքում առաջ քաշված մոտեցումները, գաղափարներն ու առաջարկությունները հարստացնում են քաղաքագիտության խնդրային ու առարկայական դաշտը, շրջանառության մեջ դնում մի շարք նոր հասկացություններ՝ հիմք դնելով քաղաքագիտական նոր հարացույցի՝ քաղաքացիավարության (ցիվիլիոլոգիայի), ձևավորման համար: Ժամանակակակից քաղաքական համակարգերի ժողովրդավարական փոխակերպումների համատեքստում նորովի արժևորելով քաղաքագիտական հետազոտություններում գործառող ինդեքսների կառուցման մեթոդը, առաջադրվում է ցիվիլիարխիայի նոր ինդեքս, որի բաղկացուցիչ տարրերը լրացնում են երկրների վարկանիշավորման մեթոդաբանությունն ու գործընթացը: Առաջին անգամ հայրենական քաղաքական գիտության մեջ համալիր վերլուծության է ենթարկվել քաղաքացիավարական ժողովրդաիշխանության երևույթը և բացահայտվել քաղաքացիավարական ժողովրդաիշխանության դերն ու նշանակությունը ժողովրդավարական փոխակերպումների համատեքստում: Ատենախոսության դրույթները տեսական առումով կարող են հիմք ծառայել բարձրագույն ուսումնական հաստատություններում ցիվիլիոլոգիայի և ժողովրդավարության մակարդակի ինդեքսի նոր դասընթացի մշակման և ներդրման համար:

Ատենախոսության արդյունքները կարող են օգտակար լինել քաղաքացիավարական ժողովրդաիշխանության կայացման քաղաքականության մշակման և դրանցից բխող ծրագրերի իրականացման գործընթացում, ինչպես նաև նմանատիպ հիմնահարցեր հետազոտողների և ուսումնասիրողների համար:

Գործնական կիրառելիության տեսանկյունից ատենախոսության շրջանակներում կատարված վերլուծություններն ու առաջարկությունները կարող են օգտակար լինել հետխորհրդային երկրներում քաղաքացիավարական ժողովրդաիշխանության կայացման քաղաքականության մշակման և դրանից բխող ռազմավարական ծրագրերի իրականացման, հանրային կառավարման համակարգում ժողովրդավարական բարեփոխումների ընթացքի փորձագիտական գնահատման կառուցակարգերի ձևավորման,

պետության և ՔՀԿ-ների միջև քաղաքացիավարական գործընկերության կազմակերպման բովանդակային և ընթացակարգային կողմերի հաշվառման, հետխորհրդային երկրներում քաղաքական համակարգի ժողովրդավարացման, քաղաքացիավարական ընթացակարգերի ներդրման, սոցիալական գործընկերության ինստիտուցիոնալ բարեփոխումների արդյունավետության բարձրացման համար:

Հետազոտության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնում: Հետազոտության առանձին դրույթներ ներկայացվել են տարբեր միջազգային գիտաժողովների, համաժողովների և աշխատաժողովների շրջանակներում, մասնավորապես՝ «Մեծ փոփոխությունների ժամանակաշրջան. քաղաքականություն և քաղաքական գործիչներ» Քաղաքական գիտության ռուսական ասոցիացիայի տարեկան գիտաժողով (ՌԴ, ք. Մոսկվա, նոյեմբերի 24-25, 2017 թ.), «Կրթության հիմնահարցերը 21-րդ դարում» միջազգային գիտաժողով (ՀՀ, ք. Երևան, հոկտեմբերի 19-20, 2017 թ.), «Ռուսաստանը նոր քաղաքական իրականության պայմաններում. ռազմավարություն և զարգացման մեթոդներ» Քաղաքական գիտության ռուսական ասոցիացիայի տարեկան գիտաժողով (ՌԴ, ք. Մոսկվա, նոյեմբերի 25-26, 2016 թ.), «Քաղաքական գիտությունը ժամանակակից քաղաքականության մարտահրավերների առջև» քաղաքագետների համառուսաստանյան VII կոնգրես (ՌԴ, ք. Մոսկվա, նոյեմբերի 19-21, 2015 թ.), «Ռուսական քաղաքական գիտություն. ծագումը, ավանդույթները և հեռանկարները» Քաղաքական գիտության ռուսական ասոցիացիայի տարեկան գիտաժողով (ՌԴ, ք. Մոսկվա, նոյեմբերի 21-22, 2014 թ.), «Հետճգնաժամային աշխարհի մետամորֆոզները. նոր ռեգիոնալիզմ և գլոբալ կառավարման սցենարներ» Միջազգային հետազոտությունների ռուսաստանյան ասոցիացիայի VI կոնվենտ (ՌԴ, ք. Մոսկվա, ապրիլի 25-26, 2014 թ.), «Որտե՞ղ է Եվրոպան: Եվրոպական ինտեգրացիան փոխակերպման մեջ» միջազգային գիտաժողով (Լեհաստան, ք. Կրակով, սեպտեմբերի 19-20, 2013 թ.), «Ռուսաստանը գլոբալ աշխարհում. քաղաքական փոխգործակցության ինստիտուտները և ռազմավարությունները» քաղաքագետների համառուսաստանյան VI կոնգրես (ՌԴ, ք. Մոսկվա, նոյեմբերի 22-24, 2012 թ.), Քաղաքական գիտության միջազգային ասոցիացիայի XXII համաշխարհային կոնգրես (Իսպանիա, ք. Մադրիդ, հուլիսի 8-12, 2012 թ.), «Քաղաքական մշակույթ և քաղաքական ընտրանու մշակույթը Արևելյան Եվրոպայում» միջազգային գիտաժողով (Գերմանիա, ք. Մյունխեն, նոյեմբերի 10-13, 2011 թ.), «Հասարակության նոր կառուցվածքային փոփոխությունը» երեք երկրների կոնգրես (Ավստրիա, ք. Ինսբրուկ, սեպտեմբերի 29 - հոկտեմբերի 1, 2011 թ.), Սոցիոլոգիայի մի-

ջազգային ինստիտուտի 39-րդ համաշխարհային կոնգրես (ՀՀ, ք. Երևան, հունիսի 11-14, 2009 թ.), «Փոփոխությունները քաղաքականության մեջ և փոփոխությունների քաղաքականություն. ռազմավարություններ, ինստիտուտներ, դերակատարներ» քաղաքագետների համառուսաստանյան V կոնգրես (ՌԴ, ք. Մոսկվա, նոյեմբերի 20-22, 2009 թ.): Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի 1 մենագրության, 4 ուսումնական ձեռնարկի, 4 ուսումնամեթոդական աշխատանքի և 60-ից ավելի գիտական հոդվածներում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կառուցվածքային և բովանդակային առումով ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 389 էջ է:

Ներածության մեջ ներկայացվում են թեմայի արդիականությունը, հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակն ու խնդիրները, գիտական մշակվածության աստիճանը, մեթոդաբանությունը, գիտական նորույթները, ատենախոսության տեսական նշանակությունն ու գործնական կիրառելիության հնարավորությունները:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Քաղաքացիավարական ժողովրդաիշխանության տեսական հիմքերը»**, բաղկացած է չորս ենթագլուխներից, որոնցում քննարկվում են քաղաքացիավարական ժողովրդաիշխանության հիմնախնդրի ուսումնասիրման տեսական հիմքերը հասարակական-քաղաքական մտքի և դեմոկրատիայի հայեցակարգերի շրջանակներում:

Առաջին ենթագլխում՝ **«Ժողովրդաիշխանության քաղաքացիավարական մոտեցումները»**, ուսումնասիրվում են դեմոկրատական հարաբերությունների, ինստիտուտների, արժեքների և նորմերի կայացմանն ու վերարտադրությանը բնորոշ քաղաքացիավարական օրինաչափությունների հետ կապված հարցերը: Դրանք վերլուծության հիման վրա հիմնավորվում է մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության քաղաքակիրթ նորմերի ու սկզբունքների, ժողովրդաիշխանության և ժողովրդավարության համապատասխանության և փոխլրացուցչության ցիվիլիզացիոն կարևորությունը: Ի մասնավորի ցույց է տրվում, որ արևմտյան ժողովրդաիշխանությունների քաղաքական համակարգերի և վարչակարգերի զարգացման գործընթացները ձևավորեցին ժողովրդավարական շարժումակության ցիվիլիզացիոն կրթական կառուցակարգեր ու կառուցակարգեր: Այս համատեքստում ազգ-պետությունների քաղաքական համակարգերի արդիականացման և ինստիտուցիոնալացման գործընթացներն ունեն ոչ միայն ներպետական (ներքին), այլև միջազգային (արտաքին) նշանակություն: Արդի պայմաններում ոչ-քաղաքակիրթ հասարակությունների դեմոկրատացման կառուցվածքային-գործառնական հնարավորությունները մեծապես կախված են ոչ միայն ներպետական, այլև միջազգային ինստիտուտներից, որոնք համընդհանուր և մասնակի ներգրավվածության պայմաններում հնարավոր են դարձնում «հրատապ» դեմոկրատիան (դեմոկրատիայի գործառնության եղանակ), իսկ երբեմն՝ նույնիսկ՝ «ցանկալի» դեմոկրատիան (դեմոկրատիայի զարգացման եղանակ): Այլ կերպ ասած, այստեղ գործ ունենք դեմոկրատիայի հնարավոր (հնարավոր դեմոկրատիա), հա-

վանական (հավանական դեմոկրատիա) և իրական (իրական դեմոկրատիա) ընթացակարգերի դիալեկտիկական միասնության հետ:

Երկրորդ ենթագլխում՝ **««Ցիվիլիարխիկ դեմոկրատիա» հասկացությունը»**, քննարկման առարկա են եզրույթի ծագումնաբանության և դրա բաղկացուցիչ տարրերի բնորոշման հետ կապված հարցերը: Դեմոկրատիային բնորոշ են ցիվիլիարխիկ քաղաքական համակարգը, վարչակարգը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման կառուցակարգերը, կոասկցությունները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, ՀԿ-ները և այլն: Ատենսիստության մեջ ցույց է տրվում, որ դեմոկրատիայի գոյությամբ է պայմանավորված նաև ցիվիլիթեայի գոյությունը, որովհետև դեմոկրատիայի և դեմոկրատական գործընթացի իրավունքը մարդու քաղաքակիրթ գոյության իրավունքներից է: Ցիվիլիարխիկ դեմոկրատիան արտացոլում է դեմոկրատիայի անցման գործընթացի և արդյունքի փոխլրացուցչությունն ու անքակտելիությունը: Այն համաշխարհային և ներազգային քաղաքական համակարգերում դրսևորվում է նաև որպես քաղաքակրթակենտրոն (ցիվիլիցենտրիկ) առանցք: Անհնար է պատկերացնել դեմոկրատիան, դեմոկրատացումը, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ներպետական և միջազգային ընթացակարգերն առանց ցիվիլիարխիզմի: Միաժամանակ դիտարկվում է «դեմոկրատիա» և «ցիվիլիարխիա» հասկացությունների հարաբերակցությունը: Ամփոփելով վերը նշված հարցերի քննարկումը, ատենսիսոը փորձում է տալ ցիվիլիարխիկ դեմոկրատիայի սահմանումը, ըստ որի՝ այն քաղաքական որոշումներ նախապատրաստելու, ընդունելու, իրականացնելու և վերահսկելու այնպիսի ինստիտուցիոնալ կարգ է, որում ժողովրդի ձայների համար քաղաքակիրթ մրցակցային պայքարի միջոցով հաղթողները ստանում են հանրային իշխանության քաղաքակիրթ իրականացման լիազորություն:

Երրորդ ենթագլխում՝ **«Քաղաքացիավարության տեսության (ցիվիլիոլոգիա) կարեգործիալ ապարարը»**, գործառության մեջ են դրվում դեմոկրատիայի «**եռանկյունի» մոդելը** և մի շարք նոր հասկացություններ, որոնք համալրում են քաղաքացիավարության տեսության կատեգորիալ ապարատը: Դրանցից են՝ **ցիվիլարխ** կամ **ցիվիլկրատ**, **ցիվիլարխիա**, **ցիվիլարխիկ բյուրոկրատիա**, **ցիվիլարխիկ դեմոկրատիա** կամ **ցիվիլկրատական դեմարխիա**, **ցիվիլարխիկ լեգիտիմություն**, **հակացիվիլարխիա**, **ցիվիլանարխիա**, **ցիվիլարխիկ մշակույթ**, **ցիվիլարխիկ պոլիկրատիա** կամ **ցիվիլկրատիկ պոլիարխիա**, **ցիվիլիթեա**, **ցիվիլմորֆիզմ**, **ցիվիլիցենրիզմ**, **ցիվիլիֆոբիա**, **ցիվիլիթեիզմ**:

Չորրորդ ենթագլխում՝ **«Ցիվիլիարխիայի ինդեքսի բաղկացուցիչ տարրերը»**, հեղինակն առաջադրում և մշակում է ցիվիլիարխիայի նոր ին-

դեքս, որի բաղկացուցիչ տարրերը լրացնում են երկրների վարկանիշավորման մեթոդաբանությունն ու գործընթացը: Գործածելով քաղաքագիտական հետազոտություններում ցարդ կիրառվող ինդեքսների կառուցման մեթոդը՝ ատենախոսը հստակեցնում է դրա խնդրային և առարկայական դաշտերը և ըստ այդմ կարևորում մարդու իրավունքների և ազատությունների անվտանգության, մասնակցության, ներկայացվածության, վերահսկողության, հաշվետվողականության, թափանցիկության, երկխոսության, գործընկերության ու զարգացման գործոնների կայացման և ձևավորման հիմնախնդիրները: Հիմնվելով ժողովրդավարության մոտեցումների, ինդեքսների և վարկանիշային առկա ուսումնասիրությունների վրա ատենախոսը, Ցիվիլիարխիայի ինդեքսի մեջ ներառում է 9-ը գործոններ ըստ հասարակական կյանքի 4 ոլորտների (քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային (ԲՏՄՄ)), որոնք խարսխված են մարդու քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ու ազատությունների պաշտպանության ընթացակարգերի վրա: Դրանք գոյություն ունեն և գործառում են մեկը մյուսով, որոնք հիմնարար սկզբունքները բխում են մեկը մյուսից, փոխապայմանավորում և փոխլրացնում են մեկը մյուսին՝ ներպետական, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում ապահովելով անվտանգություն, մասնակցություն, ներկայացվածություն, վերահսկողություն, հաշվետվողականություն, թափանցիկություն, երկխոսություն, գործընկերություն և զարգացում:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Հեղտորհրդային երկրների ժողովրդավարության մակարդակի չափման հիմնախնդիրները»**, բաղկացած է հինգ ենթագլուխներից, որոնցում քննարկվում են 1995-2015 թթ. հետխորհրդային երկրների ժողովրդավարության մակարդակի չափման հիմնախնդիրները: Ատենախոսը հիմնավորում է թե ինչու է ընտրել հենց այդ երկրները և որոնք են Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության, Ուկրաինայի, Ղազախստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության ժողովրդավարության մակարդակի չափման գիտական կարևորությունն ու քաղաքական արդիականությունը՝ հստակեցնելով ժողովրդավարության մակարդակի չափման ինդեքսի նոր հարացուցիչ խնդրային ու առարկայական դաշտի հետ կապված կարևորագույն հարցերը:

Ատենախոսության երկրորդ գլխի առաջին ենթաբաժնում՝ **«Ռուսաստանի Դաշնության ժողովրդավարության մակարդակը»**, վերլուծության են ենթարկվում 1995-2015 թթ. Ռուսաստանի Դաշնության ժողովրդավարության մակարդակի վրա ազդող քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական և առողջապահական գործոնների ինդեքսները, վերջիններիս համատեքստում բացահայտվում են ՌԴ ժողովրդավարության մա-

կարդակի ինդեքսի զարգացման միտումները, այդ նույն գործոնների բնութագրական հատկանիշները և դրանց հետ կապված բազմաթիվ այլ հարցեր: Հատկապես կարևորելով 1995-2015 թթ. ՌԴ քաղաքական համակարգի ժողովրդավարական փոխակերպումների և դրանց հիմնական միտումների էվոյուցիայի համեմատական վերլուծությունը, աստեմախոսը ստացված արդյունքներով հիմնավորում է, որ 1995-2015 թթ. ՌԴ ժողովրդավարության Քաղաքական գործոնների ինդեքսի վրա վճռորոշ ազդեցություն են ունեցել անկախ պետականության կայացումը, էթնոքաղաքական գործոնները, ընտրական գործընթացները, կուսակցությունների և ՔՀԿ-ների գործունեության ակտիվացումը, ինչպես նաև՝ մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ընթացակարգերի կայացումը: Եվրասիական համագործակցության ընդլայնման և աշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում ՌԴ-ում փոխվում են նաև պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների, կուսակցությունների և ՔՀԿ-ների միջև փոխհարաբերությունները: Ըստ այդմ, դիտարկելով դեմոկրատական լեգիտիմության հայեցակարգի ներպետական և միջազգային դրսևորումները, հեղինակը դրանք դասում է ժողովրդավարական փոխակերպումների իրականացման ներհամակարգային առանձնահատկությունների շարքին:

Աստեմախոսության երկրորդ գլխի երկրորդ ենթաբաժնում՝ **«Բելառուսի Հանրապետության ժողովրդավարության մակարդակը»**, վերլուծության են ենթարկվում 1995-2015 թթ. Բելառուսի Հանրապետության ժողովրդավարության մակարդակի վրա ազդող քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական և առողջապահական գործոնների ինդեքսները և դրանց համատեքստում փորձում բացահայտել Բելառուսի Հանրապետության ժողովրդավարության մակարդակի ինդեքսի զարգացման միտումները, ինչպես նաև խնդրո առարկա գործոնների բնորոշ հատկանիշները և դրանց հետ կապված մի շարք հարցեր: Կատարված ուսումնասիրության արդյունքներով հեղինակը հիմնավորում է, որ ժողովրդավարության մակարդակի և քաղաքական կայունության առավել մեծ անկումները դրսևորվում են ի մասնավորի նախագահական ընտրությունների ժամանակ, որը բնորոշ է հենց նախագահական կառավարման ձև ունեցող և անցումային շրջանում գտնվող հետխորհրդային երկրներին: Դիտարկելով Բելառուսի Հանրապետության ժողովրդավարության մակարդակի վրա ինտեգրման գործընթացների ունեցած ազդեցության խնդիրը՝ հեղինակը ներմուծում է **«միջինտեգրացիոն կոնֆլիկտների երկատվածություն»** հասկացությունը: Ըստ այդմ եզրակացնում է, որ Բելառուսի Հանրապետությունը որդեգրելով մի կողմից՝ ՌԴ-ի հետ «միութենական պետության» ինտեգրման մոդելը, իսկ մյուս կողմից՝ փորձելով ԵՄ-ի հետ հաստատել ինտեգրման նոր

հարաբերություններ, դրանով իսկ դժվարանում էր այդ երկրում ժողովրդրդավարացման գործընթացը: Այս առումով հեղինակը կարևորում է Բելառուսի Հանրապետության քաղաքական համակարգի ժողովրդավարական փոխակերպումների շարքում ինտեգրման լրացուցչության սկզբունքը, որը երկրի քաղաքական ընտրանուց պահանջում էր համաթեքորեն ներդաշնակեցնել «միութենական», եվրասիական և եվրոպական ինտեգրման չափորոշիչները:

Ատենախոսության երկրորդ գլխի երրորդ ենթաբաժնում՝ **«Ուկրաինայի ժողովրդավարության մակարդակը»**, վերլուծության են ենթարկվում 1995-2015 թթ. Ուկրաինայի ժողովրդավարության մակարդակի վրա ազդող քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական և առողջապահական գործոնների ինդեքսները և դրանց համատեքստում դիտարկվում Ուկրաինայի ժողովրդավարության մակարդակի ինդեքսի զարգացման միտումները, քննության առարկա գործոնների բնորոշ հատկանիշները և դրանց առնչվող բազմաթիվ հարցեր: Կատարված ուսումնասիրության արդյունքներից հեղինակը հետևեցնում է, որ թեև 1988-1994 թթ. Ուկրաինայում ընթացան անկախ պետականության կայացման գործընթացներ, այնուամենայնիվ երկրի քաղաքական դաշտում իրենց ազդեցությունը պահպանած կոմունիստական կուսակցության առաջնորդները կարողացան մինչև 2004 թ. զուգորդել ամբողջատիրական քաղաքական համակարգի պահպանման և նորին անցման գործընթացները: Այս առումով դիտարկելով Ուկրաինայում ժողովրդավարական փոխակերպումների փուլերը և դրանց առանձնահատկությունները, հիմնավորում է այն դրույթը, որ 2004 թ.-ին երկրում իրականացված ազատական ժողովրդավարական անկատար, դեռևս չավարտված փոփոխությունները «Նարնջագույն հեղափոխության» հետևանքով հանգեցրին քաղաքական համակարգի անկայունության, նոր քաղաքական ճգնաժամի և միջինտեգրացիոն կոնֆլիկտների երկատվածության:

Ըստ այդմ՝ ատենախոսը միանշանակ հանգում է այն եզրակացության, որ Ուկրաինայում ոչ քաղաքացիավարական դրսևորումներից են էթնոքաղաքական լարվածությունը, դաշնայնացման և ապակենտրոնացման հիմնախնդիրները, մարդու մշակութային իրավունքների պաշտպանության իրավիճակի հետզհետե վատթարացումը, երկրի արևելյան շրջանների շուրջ ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը, քաղաքացիական պատերազմի վերսկսման առկայծումները և այլն: Ավելին, ատենախոսի խորին համոզմամբ՝ Ուկրաինայի ժողովրդավարության մակարդակի վրա շարունակում են բացասաբար ազդել դեռևս խորհրդային շրջանից եկող և անկախացումից հետո առավելապես սրված ու մինչև օրս չկարգավորված տարածքային,

վարչատարածքային, հոգևոր-մշակութային և էթնոլեզվական հիմնախնդիրները:

Ատենախոսության երկրորդ գլխի չորրորդ ենթաբաժնում՝ **«Ղազախստանի Հանրապետության Ժողովրդավարության մակարդակը»**, վերլուծության են ենթարկվում 1995-2015 թթ. Ղազախստանի Հանրապետության Ժողովրդավարության մակարդակի վրա ազդող քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական և առողջապահական գործոնների ինդեքսները և այդ համատեքստում՝ երկրի Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի զարգացման միտումները, ինչպես նաև նշված գործոնների բնորոշ առանձնահատկությունները և դրանց առնչվող այլևայլ հարցեր: Ատենախոսը գիտականորեն փաստում է, որ Ղազախստանի Հանրապետության քաղաքական համակարգի և վարչակարգի Ժողովրդավարական փոխակերպումների վրա էական ազդեցություն են ունեցել անկախ պետականության կայացումը, քաղաքական կայունությունը, պետական իշխանության մարմինների միջև հաստատված «զսպումների ու հակակշիռների ընթացակարգերը», ընտրական գործընթացները, ինչպես նաև կուսակցությունների, քաղաքացիական հասարակության, մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ընթացակարգերի կայացումը:

Ըստ այդմ ատենախոսի կարծիքով Ղազախստանի Հանրապետության Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի ցուցանիշների բարելավման առումով վճռորոշ դեր է խաղացել երկրում իրականացված ինտեգրման գործընթացների ներդաշնակեցման և ներհասարակական համախմբվածության քաղաքականության իրագործումը: Միաժամանակ ցույց է տրվում, որ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում երկրում Ժողովրդավարության առաջընթացի համար առանցքային է լինելու մարդու իրավունքների պաշտպանության, հանրային քաղաքականության մշակման գործում ԲՀԿ-ների ներգրավման և քաղաքացիավարական երկխոսության ընթացակարգերի արդյունավետության բարձրացումը:

Ատենախոսության երկրորդ գլխի հինգերորդ ենթաբաժնում՝ **«Հայաստանի Հանրապետության Ժողովրդավարության մակարդակը»**, վերլուծության են ենթարկվում 1995-2015 թթ. Հայաստանի Հանրապետության Ժողովրդավարության մակարդակի վրա ազդած քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական և առողջապահական գործոնների ինդեքսները: Ատենախոսը գտնում է, որ ՀՀ-ում քաղաքացիավարական Ժողովրդաիշխանության նախադրյալների կայացման ժամանակակից պայմաններում առանցքային նշանակություն ունեն ինչպես խորհրդարանական կուսակցությունների և ԲՀԿ-ների քաղաքացիավարական կապիտալը, այնպես էլ դրանց կողմից միջազգային առաջավոր փորձի տեղա-

նացումն ու գիտականորեն մշակված գործընկերային մոդելների ներդրումը: Ատենախոսի համոզմամբ ՀՀ-ում ԲՀԿ-ների կառուցվածքային-գործառական կարողությունների հզորացման տեսանկյունից կարևորվում են Հանրային խորհրդի գործունեության ակտիվացումը, կանանց քաղաքացիավարական ներկայացվածության բարելավումը, քաղաքացիական ժողովրդավարական կապիտալի կայացման նախադրյալների ընդլայնումը, որոնք կնպաստեն «պետություն-քաղաքացիական հասարակություն» քաղաքացիավարական երկխոսության և գործընկերության կայացմանն ու ամրապնդմանը: Ամփոփելով դիտարկված մոտեցումները՝ հեղինակը ձևակերպվում է «քաղաքացիական ժողովրդավարական» հասկացության համապարփակ սահմանման սեփական մոտեցումը: Ըստ որի՝ քաղաքացիական ժողովրդավարական քաղաքացիավարական մասնակցություն է, որը նախաձեռնվում և իրականացվում է անհատների, խմբերի ու հասարակական միավորումների կողմից՝ հանրային քաղաքականության ոլորտներում ապահովելով քաղաքացիների ժողովրդավարական գործունեություն ազդեցություն որոշումների նախապատրաստման, ընդունման, իրականացման ու վերահսկման գործընթացներին: Այս համատեքստում կարևոր նշանակություն ունի նաև քաղաքակցիական կրթությունը, որը թույլ է տալիս ԲՀԿ-ների և սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչներին ակտիվորեն ներգրավվելու քաղաքացիավարական գործընթացներին: Ամփոփելով դիտարկված մոտեցումները՝ ձևակերպվում է «քաղաքացիական կրթություն» հասկացության համապարփակ սահմանման սեփական մոտեցումը, ըստ որի՝ քաղաքացիական կրթությունը գիտելիքների, հմտությունների, հայացքների և արժեքների քաղաքացիավարական համակարգ է, որն անհրաժեշտ է քաղաքացիական կարողությունների, սոցիալական պատասխանատվության, քաղաքացիական հասարակությանն ակտիվ մասնակցության, ինչպես նաև պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացման համար: Դրանց բնորոշումների վերլուծության հիման վրա հիմնավորվում է, որ քաղաքացիավարական ինտեգրումը դառնալով տեղեկատվական-հաղորդակցական միջավայրի բազմակարծության երաշխիք՝ տեղեկատվական-հաղորդակցական սուբյեկտներին առաջադրում է նոր խնդիրներ քաղաքացիամետ գործունեություն ու լրատվական ռեսուրսների համաչափ հասանելիություն:

Ժողովրդավարության մակարդակի գործոնների ուսումնասիրության արդյունքներով հեղինակը եզրահանգում է, որ քաղաքացիավարական ժողովրդաիշխանության կայացման փուլում գտնվող ՀՀ քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ բարեփոխումների շրջանակներում առանցքային նշանակություն ունի արհեստակցական միությունների դերի ու նշա-

նակության կարևորումը: Միայն այդ ձևով դրանք կարող են դառնալ առանցքային դերակատարներ սոցիալ-աշխատանքային հիմնախնդիրների կարգավորման, ինչպես նաև մարդու սոցիալական իրավունքների և ազատությունների պաշտպանության գործընթացներում: Կատարված ուսումնասիրության հիման վրա հեղինակը հիմնավորում է, որ ներհամակարգային սոցիալական ինտեգրման ընթացակարգերի ստեղծումը համաչափ կդարձնի նաև ինտեգրման գործընթացները՝ նպաստելով ՀՀ-ում քաղաքացիավարական սոցիալական գործընկերության կայացմանը: Այն ենթադրում է կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մշակույթի զարգացում, իսկ սա, ինքնին վերցրած, սոցիալական գործընկերության գործառույթյան եղանակ է: Այս առումով կարող ենք տարբերակել սոցիալական գործընկերության համակարգերի քաղաքացիավարական, ոչ քաղաքացիավարական և հակաքաղաքացիավարական տեսակները: Քաղաքացիավարական են սոցիալական գործընկերության այն համակարգերը, որոնք սոցիալական քաղաքականության սուբյեկտների միջև բանակցությունների, երկխոսության ու փոխզիջումների միջոցով ապահովում են կորպորատիվ պատասխանատվություն ու վերահսկողություն, սոցիալական ներդրումներ ու սոցիալական կապիտալ, մարդկային կյանքի որակ ու անվտանգություն: Ոչ քաղաքացիավարական են սոցիալական գործընկերության այն համակարգերը, որոնցում դեռևս կայացման փուլում են գտնվում կորպորատիվ սոցիալական պատասխանատվության սուբյեկտներն ու ընթացակարգերը, իսկ հակաքաղաքացիավարական են սոցիալական գործընկերության այն համակարգերը, որոնցում բացակայում կամ արգելափակվում են գործընկերային պատասխանատվությունն ու վերահսկողությունը՝ խորացնելով սոցիալական անվստահությունն ու անպաշտպանվածությունը, որոնք հանգեցնում են ոչ միայն գործընկերային հարաբերությունների ձևափոխմանը, այլև քաղաքացիավարական կայունության վտանգմանը:

Ատենախոսն առաջնորդվելով ՀՀ կառավարության 2010թ. որոշմամբ հաստատված «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության դրույթներից բխող՝ աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման» ծրագրով և արհեստակցական միությունների քաղաքացիավարական նշանակությամբ՝ առաջարկում է ՀՀ կառավարությանն առընթեր ստեղծել Տնտեսական և սոցիալական հարցերի կոմիտե, որը կհամակարգի ՀԱՄԿ-ի հետ հարաբերությունները՝ մշակելով և իրականացնելով սոցիալ-աշխատանքային ոլորտի ռազմավարական ծրագրերն ու միջոցառումները: Կոմիտեն առավել արդյունավետորեն կօգտագործի արհեստակցական միությունների ներուժը գործառույթի սոցիալ-աշխատանքային իրավունքների ու ազատությունների պաշտպանության գործընթացում:

Ըստ ատենախոսության գլուխների՝ **Եզրակացությունում** ներկայացվում են հետազոտության հիմնական արդյունքները, տեսական ու գործնական նշանակություն ունեցող եզրահանգումներն ու առաջարկությունները:

Հայկական պետականության կայացման ժամանակակից դարաշրջանում հայ հասարակության և համայն հայության համար առանցքային նշանակություն ունեն ՀՀ-ում քաղաքացիավարական ժողովրդաիշխանության կայացման նախադրյալներն ու զարգացման հեռանկարները: Համաշխարհային և տարածաշրջանային քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային մրցակցության արդի պայմաններում ՀՀ-ը ներգրավված է միջազգային, եվրոպական և եվրասիական ինտեգրման գործընթացներում՝ անդամակցելով մի շարք կազմակերպությունների, դրանց շրջանակներում ստանձնելով քաղաքացիավարական ժողովրդաիշխանության ամրապնդման պարտավորություններ: Այս առումով առանձնահատուկ նշանակություն ունեն ՄԱԿ-ի, ԵԽ-ի, ԵԱՀԿ-ի, ԵՄ-ի և ԵԱՏՄ-ի շրջանակներում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության, անվտանգության, մասնակցության, ներկայացվածության, վերահսկողության, հաշվետվողականության, թափանցիկության, երկխոսության, գործընկերության և զարգացման ոլորտներում իրականացվող բարեփոխումները: Գլոբալ մարտահրավերների, տարածաշրջանային հակասությունների և աշխարհաքաղաքական նոր իրավիճակի փոփոխության պայմաններում հայկական քաղաքացիավարության համար կենսական են ոչ միայն քաղաքական համակարգի կայունության ապահովման, այլև մարդկային կապիտալի, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացման և ներուժի արդյունավետ օգտագործման ընթացակարգերը: Հաշվի առնելով ժամանակակից ժողովրդարական պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման գերակայությունները և ռազմավարական առաջնահերթությունները՝ ՀՀ-ն իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ մի շարք միջոցառումների ծրագրեր, որոնց ճիշտ իրագործումը կարող է դրական ազդեցություն ունենալ հայ հասարակության ժողովրդավարության մոդելի վրա: Գերակա համարելով ժողովրդաիշխանության քաղաքացիավարական ընթացակարգերի զարգացման սկզբունքը՝ հայ հասարակությունն այն պետք է համահունչ դարձնի հայկական պետականության ամրապնդման առաջնահերթություններին:

Ըստ ատենախոսության գլուխների՝ **Եզրակացությունում** ներկայացվում են հետազոտության հիմնական արդյունքները և առանձնացվում տեսական ու գործնական նշանակություն ունեցող հետևյալ եզրահանգումներն ու առաջարկությունները:

✓ Ժամանակակից պայմաններում առկա են ժողովրդավարական քաղաքական համակարգի և վարչակարգի, ինստիտուտների և գործընթացների, ժողովրդավորության մակարդակի, մշակույթի, արժեքների և այլ բաղկացուցիչ տարրերի չափման բազմաթիվ ինդեքսներ: Դրանք հիմնվում են ժողովրդավարության ավանդական և ժամանակակից տեսությունների վրա՝ համեմատական վերլուծությունների միջոցով վարկանիշավորելով ժողովրդավարության կայացման, կառուցվածքային-գործառական և զարգացման միտումները: Դեմոկրատիայի ցիվիլիարիսիկ մակարդակի չափման տեսանկյունից առանցքային նշանակություն ունեն մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության, քաղաքացիակենտրոն հանրային իշխանության և հասարակաբար կառավարման, քաղաքակիրթ մրցակցության, ներկայացվածության և վերահսկողության ընթացակարգերը: Հիմնվելով ժողովրդավարության մոտեցումների, ինդեքսների և վարկանիշային ռաումնասիրությունների վրա և ցանկանալով համախմբել դրանց որակական կողմերը՝ առաջարկում ենք **Ցիվիլիարիսիայի ինդեքսը**: Այն ներառում է 9-ը գործոններ ըստ հասարակական կյանքի 4 ոլորտների, որոնք խարսխված են մարդու քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ու ազատությունների պաշտպանության ընթացակարգերի վրա: Դրանք գոյություն ունեն և գործառում են մեկը մյուսով, որոնց հիմնարար սկզբունքները բխում են մեկը մյուսից, փոխպայմանավորում և փոխլրացնում են մեկը մյուսին՝ ներպետական, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում ապահովելով *անվտանգություն, մասնակցություն, ներկայացվածություն, վերահսկողություն, հաշվեպրոդականություն, թափանցիկություն, երկխոսություն, գործընկերություն և զարգացում*: ՔUSU-ի 4 ենթաինդեքսների 9-ը չափումները և 36 գործոնները ձևավորում են **Ցիվիլիարիսիայի առանցքը**, որն ապահովում է մարդու ՔSUU իրավունքների և ազատությունների միջև փոխլրացուցչությունը: **Ցիվիլիարիսիայի առանցքից** շեղումները դեպի «ՔSUU ազատությունների» կամ դեպի «ՔSUU իրավունքների» ուղղությամբ ցույց են տալիս ցիվիլիարիսիայի կառուցվածքային-գործառական հիմնախնդիրները:

✓ Քաղաքացիավարական մոտեցումները լրացնում են ժողովրդաիշխանության տեսության մեթոդաբանական բացը՝ կարևորելով ժողովրդաիշխանության որակի, քաղաքացիակենտրոն կառավարման, օրենքի գերակայության, մարդու քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային ընթացակարգերի կայացումը: Քաղաքացիավարական ժողովրդաիշխանությունը ներառում է մարդու քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային անվտանգության, մասնակցության, ներկա-

յացվածության, վերահսկողության, հաշվետվողականության, թափանցիկության, երկխոսության, գործընկերության և զարգացման իրավունքներն ու ազատությունները: Դրանով իսկ այն դառնում է քաղաքական որոշումներ նախապատրաստելու, ընդունելու, իրականացնելու և վերահսկելու այնպիսի ինստիտուցիոնալ կարգ, որում ժողովրդի ձայների համար քաղաքակիրթ մրցակցային պայքարի միջոցով հաղթողները ստանում են հանրային իշխանության քաղաքացիավարական իրականացման լիազորությունը:

✓ Շրջանառության մեջ դրված քաղաքացիավարության տեսության նոր հասկացությունները համեմատական քաղաքագիտության մեթոդաբանության տեսնակյունից հնարավորություն են տալիս համարժեքորեն բնորոշելու ժողովրդավարական քաղաքական համակարգերի և վարչակարգերի կայացման գործընթացը՝ տարբերակելով քաղաքացիավարական, ոչ քաղաքացիավարական և հակաքաղաքացիավարական մակարդակներ ու չափումներ: Այս առումով առանձնահատուկ նշանակություն են ստանում ժողովրդավարական ինստիտուտների և ժողովրդավարացման գործընթացների որակական հատկանիշները, որոնց համար հիմնականը քաղաքացիավարական գործոնների գերակայությունն է:

✓ Ժողովրդավարական լեգիտիմությունը քաղաքացիավարական իշխանության երևույթ է, որն ապահովում է պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների, խորհրդարանական կուսակցությունների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև վերահսկողություն, հաշվետվողականություն, թափանցիկություն, երկխոսություն և գործընկերություն: Ներմուծելով «քաղաքացիավարական լեգիտիմություն» հասկացությունը՝ ատենախոսության մեջ հատկապես կարևորվում են քաղաքականության սուբյեկտների քաղաքացիակենտրոն գործունեությունը և պատասխանատվությունը, նրանց կողմից հասարակաբար զարգացման հայեցակարգերի մշակումը և իրականացումը՝ համարժեքորեն լուծելու համար հանրային իշխանության առջև ծառայած սպառնալիքները, ռիսկերն ու մարտահրավերները:

✓ Հիմք ընդունելով հետխորհրդային երկրների քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային առանձնահատկությունները՝ ատենախոսը գտնում է, որ հենց դրանք են պայմանավորում քաղաքացիավարական ժողովրդաիշխանության կայացման ուղիների տարբերությունները Ռուսաստանում, Բելառուսում, Ուկրաինայում, Ղազախստանում և Հայաստանում: Վերջիններիս ժողովրդավարության մակարդակի վրա զգալի է քաղաքական գործոնների ապակառուցողական ազդեցությունը, որի հիմնական պատճառը պետական իշխանության մարմինների միջև «զսպումների և հակակշիռների» սահմանադրական ընթացակարգերի,

ինչպես նաև քաղաքացիավարական մասնակցության մշակույթի թերություններն են, պետության, խորհրդարանական կուսակցությունների և ՔՀԿ-ների միջև բազմակողմանի համագործակցության մոդելի բացակայությունը: Անհրաժեշտ է մշակվել և ներդնել ՔՀԿ-ների մասնակցային կառավարման արդյունավետության բարձրացման սահմանադրական և իրավաքաղաքական կառուցակարգեր: ՌԴ-ում, Բելառուսում և Ղազախստանում քաղաքացիավարական ժողովրդաիշխանության առանցքային գործոն է արհեստակցական միությունների գործունեությունը, որի շնորհիվ մինչև օրս դրանք կարողանում են ապահովել սոցիալական երկխոսության, գործընկերության և զարգացման դրական միտումներ: ՌԴ-ում, Բելառուսում և Ղազախստանում քաղաքացիավարական ժողովրդաիշխանության կայացման գործընթացներում քաղաքական և մշակութային գործունեների կառուցողական ազդեցության բարձրացումը հնարավորություն կտա կայացնելու բազմակուսակցական համակարգ, ինչպես նաև մշակելու արդյունավետ և համարժեք էթնոմշակութային քաղաքականություն՝ նվազագույնի հասցնելով հասարակական համակարգի անկայունության միտումները: Ուկրաինայում քաղաքացիավարական ժողովրդաիշխանության կայացման առանցքային գործոնը ՀԿ-ները և քաղաքացիական շարժումներն են, որոնք բազմակուսակցական համակարգի և արհեստակցական միությունների չկայացվածության պայմաններում պատճառ են դառնում բախումաձին իրավիճակների՝ ըստ ամենայնի վտանգելով ներհասարակական համերաշխությունը, անվտանգությունը և կայությունը,

✓ ՀՀ-ում քաղաքացիավարական ժողովրդաիշխանության կայացումը քաղաքական կայունության և ազգային անվտանգության երաշխիք է: ՀՀ-ում քաղաքացիավարական ժողովրդաիշխանության կայացման առանցքային գործոնը ՀԿ-ների գործունեությունն է, որի շնորհիվ դրանք նպաստում են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև քաղաքացիական երկխոսությանը, գործընկերությանը և զարգացմանը: ՀԿ-ներ զգալի դերակատարում ունեն հայ հասարակության միջազգային, տարածաշրջանային և ներպետական քաղաքացիավարական ինտեգրման գործընթացում՝ ապահովելով քաղաքացիական պետության, ակտիվ քաղաքացիության և քաղաքացիական մշակույթի կայացումը:

✓ Խորհրդարանական կուսակցությունները լինելով քաղաքացիավարական ժողովրդաիշխանության կարևոր գործոն՝ նպաստում են կուսակցական մշակույթի կայացմանը և խորհրդարանական կայուն մեծամասնության կայացմանը: Խորհրդարանական կուսակցություններն ակտիվ դերակատարում ունեն երկրի ներքին և արտաքին քաղաքական գործընթացներում, միջազգային, եվրոպական, եվրասիական, եվրատլանտ-

յան, տարածաշրջանային ինտեգրման գործընթացներում: Դրանց քաղաքացիավարական նշանակությունն իրավաքաղաքական առումով նախանշվեց 2015թ. ՀՀ Սահմանադրության փոփոխություններով և 2016թ. նոր ընտրական օրենսգրքով, որոնցով ստեղծվում են նոր ընթացակարգեր ներկուսակցական ժողովրդավարության, միջկուսակցական համագործակցության, ՔՀԿ-ների հետ համագործակցության, քաղաքացիավարական պատասխանատվության և վերահսկողության համար: Կիսանախագահականից անցումը խորհրդարանական կառավարման ձևին կստեղծի նոր զսպումների և հակակշիռների ընթացակարգեր, որն անհրաժեշտ է քաղաքական համակարգի և վարչակարգի քաղաքացիավարական կայունության համար,

✓ ՀՀ հանրային խորհրդի կառուցվածքային-գործառական սահմանադրաիրական կարգավիճակի բարձրացումը և օրենքի ընդունումը կապահովեն ՀԿ-ների գործունեության քաղաքացիավարական նոր մակարդակ: Այս համատեքստում անհրաժեշտ է Հանրային խորհրդի կազմում ներառել նաև արհեստակցական միություններին, կրոնական կազմակերպություններին և սոցիալական ՁԼՄ-ներին, որը հնարավորություն կտա իրականացնելու քաղաքացիավարական վերահսկողություն սոցիալ-տնտեսական և մշակութային ոլորտներում:

✓ Կարևորելով կանանց քաղաքացիավարական ներկայացվածության կայացման նախադրյալները ՀՀ-ում, ատենախոսն առաջարկում է.

- ՀՀ կառավարության ռազմավարական ծրագրերի միջոցով հետևողականորեն աջակցել կանանց տնտեսական մասնակցության, առողջության պահպանման և քաղաքական հնարավորությունների հիմնախնդիրների կարգավորմանը,

- խորհրդարանական կուսակցությունների և կանանց ՀԿ-ի համագործակցությամբ նպաստել կանանց քաղաքացիավարական ներուժի կայուն զարգացմանը,

- հաշվի առնելով ՀՀ-ում կանանց կրթական մակարդակի բարձր ցուցանիշները՝ անհրաժեշտ է ընդլայնել կանանց ներգրավվածությունը կրթության, առողջապահության և սոցիալական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում,

- գենդերային քաղաքականության ոլորտում սոցիալական գործընկերության և երկխոսության ապահովման նպատակով անհրաժեշտ է ընդլայնել ՀՀ վարչապետին կից կանանց խորհրդի կազմը՝ ներառելով Հայաստանի արհմիությունների համադաշնության, Հայաստանի գործատուների հանրապետական միության, ՀՀ հանրային խորհրդի ժողովրդագրական և գենդերային հարցերի հանձնաժողովի, ԵՊԿ գենդերային

հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի ներկայացուցիչներին,

- ՀՀ կառավարության գենդերային քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով հարկ է աջակցել գենդերագիտական հետազոտությունների իրականացմանը հանրապետական, մարզային և համայնքային մակարդակներում՝ համագործակցելով ԵՊՀ Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի հետ, որը հնարավորություն կտա իրականացնելու գիտական կառավարում և առաջիկայում հաղթահարելու հանրապետությունում առկա անհանդուրժելի վիճակը:

✓ Սոցիալական երկխոսության և գործընկերության համակարգի թերության հետևանքով ՀՀ-ում գործող արհեստակցական միությունները դեռևս չունեն սոցիալ-աշխատանքային քաղաքացիավարական գործառույթներ: ՀՀ-ում ընդունված են սոցիալական գործընկերության սահմանադրաիրավական և օրենսդրական ընթացակարգեր, վավերացված են ԱՄԿ-ի կոնվենցիաները և հիմնարար կոնվենցիաները, որոնք անհրաժեշտ իրավաքաղաքական հիմք են հասարակական-տնտեսական ինստիտուտների փոխադարձ կապերի և արհեստակցական միությունների հանրային մասնակցության մշակույթի ձևավորման համար: Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2010 թ. որոշմամբ հաստատված «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության դրույթներից բխող՝ աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման» ծրագրով և հաշվի առնելով արհեստակցական միությունների քաղաքացիավարական նշանակությունը, անհրաժեշտ է ՀՀ կառավարությանն առընթեր ստեղծել Տնտեսական և սոցիալական հարցերի կոմիտե, որը կհամակարգի ՀԱՄԿ-ի հետ հարաբերությունները՝ մշակելով և իրականացնելով սոցիալ-աշխատանքային ոլորտի ռազմավարական ծրագրերն ու միջոցառումները: Կոմիտեն պետք է առավել արդյունավետորեն օգտագործի արհեստակցական միությունների ներուժը գործառույթների սոցիալ-աշխատանքային իրավունքների ու ազատությունների պաշտպանության գործընթացում՝ իրականացնելով սոցիալական աուդիտի ազգային մոդելը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական աշխատություններում.

1. **Aleksanyan A.**, Civic education as a condition for the socialization of schoolchildren in Armenia: the example of the integration model of the high school // «Կրթության հիմնահարցերը 21-րդ դարում» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու: Երևան: ԵՊՀ հրատ., 2017, էջ 245-253:

2. **Մելիքյան Ա.**, Ցիվիլիարտիստիկ հնդեքսի մշակման փորձ // «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», Երևան, 2016, № 2 (20), էջ 52-67:

3. **Aleksanyan A.**, The impact of the Armenian genocide on the formation of national statehood and political identity // Հայագիտական հանդես, Երևան, 2016, № 2 (8), էջ 22-43:

4. **Алексанян А.**, Влияние политических факторов на уровень российской консоциальной демократии // Теоретические предпосылки и прикладные возможности социологии: Материалы армяно-русской международной научной конференции / Отв. ред. А. К. Саакян, С. В. Бойко, В. А. Шабалов - Ереван: Ереванский государственный университет, 2016, с. 4-13.

5. **Aleksanyan A.**, Armenian Labour Migration as a Phenomenon of Social Integration // Armenians around the World: Migration and Transnationality (Ed. by A. Mkrtychyan). Frankfurt am Main: Peter Lang GmbH, 2015, pp. 219-236.

6. **Aleksanyan A.**, Labor Migration of Armenians into Russia: Problems and Prospects // Журнал «Мир России», Москва, 2015, Т. 24, № 2, с. 105-128.

7. **Алексанян А.**, Гражданское общество как гарант цивилиархической интеграции на Евразийском пространстве // Формирование гражданского общества в России: стратегии и управление: монография /Под ред. Л. Е. Ильичевой. - Москва: Аналитик, 2015, с. 20-35.

8. **Алексанян А.**, Индексы уровня демократизации стран Южного Кавказа // Современные глобальные проблемы социальных и гуманитарных наук: сборник научных трудов. - СПб.: Изд-во Санкт-Петербургского университета управления и экономики, 2015, с. 60-70.

9. **Алексанян А.**, Современные вызовы интеграционных процессов на Южном Кавказе: Европейское и евразийское измерение // Межсекционный сборник № 3 «Региональная политика»: научное издание / Под ред. В. И. Салыгина, С. Г. Лузянина, Л. В. Захаровой, А. В. Мальгина, Г. М. Лесной. - Москва: Изд-во «МГИМО-Университет», 2015, с. 151-160.

10. **Մելիքյան Ա.**, Կանանց քաղաքացիավարական ներկայացվածության հիմնախնդիրները ՀՀ-ում // Բանբեր Երևանի համալսարանի «Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն» 144.6, 2014, № 3, էջ 36-46:

11. **Aleksanyan A.**, Current challenges for the integration processes in the Southern Caucasus: European and Eurasian dimensions // *Central Asia and the Caucasus: Journal of Social and Political Studies*, Lulea, 2014, vol.15, Issue 3, pp. 28-40.

12. **Алексанян А.**, Современные вызовы интеграционным процессам на Южном Кавказе: Европейское и Евразийское измерения // «Центральная Азия и Кавказ» Журнал социально-политических исследований, том 17, выпуск 3, Лулео, 2014, с. 31-44.

13. **Ալեքսանյան Ա.**, Քաղաքացիական ժողովրդավարական որպես քաղաքացիավարական գործոն // Բանբեր Երևանի համալսարանի «Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», Երևան, 2013, № 141.6, էջ 24-34:

14. **Aleksanyan A.**, The Influence of Social Partnership on Regime Democratization in Armenia // Բանբեր Երևանի համալսարանի «Անցիոլոգիա, Տնտեսագիտություն», Երևան, 2012, № 138.5, էջ 14-23:

15. **Aleksanyan A.**, The civilarchic foundations of political democratization in Armenia // *Central Asia and the Caucasus: Journal of Social and Political Studies*, Lulea, 2011, vol.12, Issue 3, pp. 116-127.

16. **Алексанян А.**, Цивилиархические основы демократизации политического режима в Армении // «Центральная Азия и Кавказ» Журнал социально-политических исследований, том 14, вып. 3, Лулео, 2011, с. 132-145.

17. **Ալեքսանյան Ա.**, Կրոնական կազմակերպությունները հետխորհրդային քաղաքացիական հասարակության համակարգում // XX դարի կրոնական մարտահրավերները և Հայաստանը: Գիտաժողովի նյութեր: Երևան: Երևանի համալս. հրատ., 2011, էջ 106-114:

18. **Ալեքսանյան Ա.**, Հետխորհրդային արհեստակցական միությունները քաղաքացիավարական ժողովրդաիշխանության գործոն // Գիտաժողովի նյութեր: Երևան, ԼՂՀ ԿԳ, Մ. Մաշտոց համալսարան, 2011, էջ 20-29:

19. **Aleksanyan A.**, Post-Soviet social partnership: the political and civilarchic dimensions of social responsibility // *Central Asia and the Caucasus: Journal of Social and Political Studies*, Лулео, 2010, vol.11, Issue 4, pp. 126-138.

20. **Алексанян А.**, Постсоветское социальное партнерство: политическое и цивилиархическое измерение социальной ответственности // «Центральная Азия и Кавказ» Журнал социально-политических исследований, том 13, выпуск 4, Лулео, 2010, с. 149-162.

21. **Ալեքսանյան Ա.**, Սոցիալական գործընկերությունը քաղաքացիավարական սոցիալական պատասխանատվության համակարգում // Բանբեր Երևանի համալսարանի «Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», Երևան, 2010, № 132.6, էջ 24-36:

22. **Ալեքսանյան Ա.**, Սոցիալական գործընկերության հարցի շուրջ // Բանբեր Երևանի համալսարանի «Սոցիոլոգիա, տնտեսագիտություն, Երևան, 2010, № 132.5, էջ 5-14:

23. **Алексанян А.**, К вопросу о роли институтов гражданского общества в процессе демократизации Черноморского региона // Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 2009, № 3 (129), էջ 58-67:

24. **Алексанян А.**, Гражданское общество: цивилицентризм и цивилитет // Политическая наука и политические процессы в РФ и Новых Независимых Государствах. Екатеринбург: УРО РАН, 2006, с. 5-11.

25. **Ալեքսանյան Ա.**, Տիվիլիարիսիկ դեմոկրատիա: Երևան: Երևանի համալս. հրատ., 2005, 128 էջ:

26. **Ալեքսանյան Ա.**, Մարդու քաղաքական իրավունքների ու ազատությունների պաշտպանության ներպետական մեխանիզմները Հայաստանում // Հայաստանը մարդու իրավունքների հեռանկարում: Գիտաժողովի նյութեր: Երևան: Երևանի համալս. հրատ., 2005, էջ 33-39:

27. **Aleksanyan A.**, Interstate Mechanisms of the Protection of Human Political Rights and Freedoms in Armenia // Human Rights Perspectives for Peace and Democracy: Human Rights, Human Rights Education and Minorities (Ed. by A. Mihr et al.). Potsdam: Universitätsverlag Potsdam, 2005, pp. 36-42.

28. **Aleksanyan A.**, The Civiarchic Transformation of Civil Society in Armenia: Civiologic Discourse // Black Sea Politics: Political Culture and Civil Society in an Unstable Region (ed. by A. Ayata, A. Ergun and I. Çelimli). I.B. Tauris & Co Ltd, London, New York, 2005, pp. 130-140.

29. **Алексанян А.**, К вопросу о взаимоотношения цивилиархии и глобализации // Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 2002, № 1, էջ 115-125:

30. **Алексанян А.**, Постсоветское пространство: глобализация и цивилиархия // Евразийство - будущее России: диалог культур и цивилизаций» / Под ред. Л. В. Ниязова, К. Х. Каландарова. - Москва: Монолит, 2001, с. 227-240.

31. **Алексанян А.**, Гражданское общество: определение и субъекты // Պետություն և իրավունք, Երևան, 2001, № 2, էջ 68-75:

**Թեմայի շուրջ հեղինակը հանդես է եկել նաև հետևյալ
հրապարակումներով.**

32. Ալեքսանյան Ա., Ռուսաստանի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը // Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի միտումները մարդու իրավունքների և ժողովրդավարացման չափումներում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա): Երևան: ԵՊՀ հրատ., 2017, էջ 122-142:

33. Ալեքսանյան Ա., Բելառուսի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը // Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի միտումները մարդու իրավունքների և ժողովրդավարացման չափումներում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա): Երևան: ԵՊՀ հրատ., 2017, էջ 152-170:

34. Ալեքսանյան Ա., Ղազախստանի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը // Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի միտումները մարդու իրավունքների և ժողովրդավարացման չափումներում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա): Երևան: ԵՊՀ հրատ., 2017, էջ 178-202:

35. Ալեքսանյան Ա., Ուկրաինայի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը // Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի միտումները մարդու իրավունքների և ժողովրդավարացման չափումներում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա): Երևան: ԵՊՀ հրատ., 2017, էջ 230-257:

36. Aleksanyan A., The index of democracy level of Russia // Trends of the Index of Democracy Level in the dimension of human rights and democratization (Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine and Moldova). Yerevan: YSU Press, 2017, pp. 104-120.

37. Aleksanyan A., The index of democracy level of Belarus // Trends of the Index of Democracy Level in the dimension of human rights and democratization (Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine and Moldova). Yerevan: YSU Press, 2017, pp. 131-146.

38. Aleksanyan A., The index of democracy level of Kazakhstan // Trends of the Index of Democracy Level in the dimension of human rights and democratization (Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine and Moldova). Yerevan: YSU Press, 2017, pp. 155-175.

39. Aleksanyan A., The index of democracy level of Ukraine // Trends of the Index of Democracy Level in the dimension of human rights and

democratization (Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine and Moldova). Yerevan: YSU Press, 2017, pp. 198-220.

40. Ալեքսանյան Ա., Ռուսաստանի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը // Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական վերլուծությունը մարդու իրավունքների և ժողովրդավարացման համատեքստում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ուկրաինա, Մոլդովա): Երևան: ԵՊՀ հրատ., 2016, էջ 132-156:

41. Ալեքսանյան Ա., Բելառուսի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը // Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական վերլուծությունը մարդու իրավունքների և ժողովրդավարացման համատեքստում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ուկրաինա, Մոլդովա): Երևան: ԵՊՀ հրատ., 2016, էջ 166-182:

42. Ալեքսանյան Ա., Ղազախստանի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը // Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական վերլուծությունը մարդու իրավունքների և ժողովրդավարացման համատեքստում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ուկրաինա, Մոլդովա): Երևան: ԵՊՀ հրատ., 2016, էջ 189-210:

43. Ալեքսանյան Ա., Ուկրաինայի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը // Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական վերլուծությունը մարդու իրավունքների և ժողովրդավարացման համատեքստում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ուկրաինա, Մոլդովա): Երևան: ԵՊՀ հրատ., 2016, էջ 256-285:

44. Aleksanyan A., The index of democracy level of Russia // Comparative Analysis of the Index of Democracy Level in the context of Human Rights and Democratization (Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine and Moldova). Yerevan: YSU Press, 2016, pp. 107-126.

45. Aleksanyan A., The index of democracy level of Belarus // Comparative Analysis of the Index of Democracy Level in the context of Human Rights and Democratization (Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine and Moldova). Yerevan: YSU Press, 2016, pp. 136-149.

46. Aleksanyan A., The index of democracy level of Kazakhstan // Comparative Analysis of the Index of Democracy Level in the context of Human Rights and Democratization (Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus,

Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine and Moldova). Yerevan: YSU Press, 2016, pp. 157-174.

47. **Aleksanyan A.**, The index of democracy level of Ukraine // Comparative Analysis of the Index of Democracy Level in the context of Human Rights and Democratization (Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine and Moldova). Yerevan: YSU Press, 2016, pp. 217-241.

48. **Ալեքսանյան Ա.**, Ռուսաստանի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը. Քաղաքական գործոնների ինդեքսը // Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական վերլուծություն. Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ուկրաինա, Մոլդովա: Երևան: ԵՊՀ հրատ., 2015, էջ 96-110:

